

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ**

9 օգոստոսի 2022 թ.

N 823-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ԹԻՎ 477-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2020 թվականի մայիսի 27-ի «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 102-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 477-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածում (այսուհետև՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հավելված N 1-ի «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության» օրինակելի ձևի աղյուսակի 12-րդ կետում «Թերթ» բառը փոխարինել «Էջերի քանակը» բառերով,

2) Հավելված N 1-ի 6-րդ կետի առաջին նախադասությունից հետո անհրաժեշտ է լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում այս դաշտում անհրաժեշտ է ամբողջությամբ արտացոլել Կազմակերպության կանոնադրության համապատասխան բաժնում առկա գործունեության առարկան և նպատակները:»,

3) Հավելված N 1-ի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9.Հաշվետվության 6-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության կողմից իրականացված ծրագրերը՝ բացառությամբ հանրային միջոցներով իրականացվածները, յուրաքանչյուր ծրագրի անվանումը և վայրը, ծրագրի նպատակը և կարգավիճակը (ավարտված կամ ընթացքի մեջ): Մեկից ավելի ծրագրեր կամ դրանք տարբեր վայրերում իրականացնելու դեպքում լրացուցիչ տողեր ավելացվում են նույն կետում առկա ստեղծի միջոցով: Ընդ որում ծրագրերի իրականացման վայրը նշելու դեպքում անհրաժեշտ է նշել դրա իրականացման երկիրը, իսկ Հայաստանի Հանրապետությունում ծրագրերի իրականացման դեպքում՝ նաև մարզը և համայնքը:»,

4) Հավելված N 1-ի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10.Հաշվետվության 7-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության կողմից հանրային միջոցներով իրականացված ծրագրերը՝ յուրաքանչյուր ծրագրի անվանումը և վայրը, ծրագրի կարգավիճակը, նպատակը և հիմնական արդյունքները (ծրագրի իրականացման արդյունքում կատարված աշխատանքի համառոտ նկարագրությունը): Մեկից ավելի ծրագրեր կամ դրանք տարբեր վայրերում իրականացնելու դեպքում լրացուցիչ տողեր ավելացվում են նույն կետում առկա ստեղծի միջոցով: Ընդ որում ծրագրերի իրականացման վայրը նշելու դեպքում անհրաժեշտ է նշել դրա իրականացման երկիրը, իսկ Հայաստանի Հանրապետությունում ծրագրերի իրականացման դեպքում՝ նաև մարզը և համայնքը:»,

5) Հավելված N 1-ի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11.Հաշվետվության 8-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության տարեկան փաստացի մուտքերի՝ այդ թվում ստացված հանրային միջոցների, ընդհանուր գումարը. 8.1 կետում՝ դրամական միջոցները, 8.2 կետում՝ դրամական միջոցներից տարբերվող այլ գույքը՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված արժեքով:»,

6) Հավելված N 1-ի 13-րդ կետում «օգտագործված» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ ծախսված)» բառերը,

7) Հավելված N 1-ի 19-րդ կետում «հաշվետվությունը» բառից հետո լրացնել «ներբեռնելուց, ստորագրելուց և վերբեռնելուց հետո» բառերը,

8) Հավելված N 1-ի 21-րդ կետում «լրացվում է» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված եկամուտների և ծախսերի հաշվառման դրամարկղային մեթոդի կիրառմամբ, հայերեն,» բառերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից:

ՌՈՒՍԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 17 օգոստոսի 2022 թվական: